

Հ. Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ
ԱՐԵԳԱԿԻ ԵՎ, ԼՈՒՍՆԻ
ԻՎԱՎԱՐՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

523.418

2 - 16

7323

Բայց այս չէ.

72. Առաջնահամար-

ակի թափառութեա-

2 թ.

Հ. Ա. ԹՎԵԼՅԱՆ

523.78

F-16

լրաց.

ԱՄՓՈՒԹ է 1961 թ.

523.33

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ
ԱՐԵԳԱԿԻ ԵՎ ԼՈՒՄՆԻ
ԽԱՎԱՐՈՒՄՆԵՐԸ

Կ 2 23
4 2 1/2
A 2/66



Z U 3 M 6 S Z R U S

ԵՐԵՎԱՆ

1944

Г. С. Бадалян
О затмениях солнца и луны
(на армянском языке)
Армгиз Ереван

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐ ԽԱՎԱՐՈՒՄՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

Երկնային մարմինների խավարումներից
Արեգակի և Լուսնի խավարումներն այնպի-
սի ուշագրավ ու հետաքրքրական երկնային
երեվույթներ են, որ ամենավաղ ժամանակ-
ներից սկսած մեծ հետաքրքրություն են
առաջացրել մարդկանց մեջ։ Այդ հետաքրք-
րությունը բնական է. չէ՞ որ երբեմն
անսպասելի կերպով արեգակի լույսն ըսկը-
սում է պակասել, հետո շատ կարճ ժամա-
նակ արեգակը բոլորովին դադարում է լու-
սպորելուց, ապա նորից սկսում աստիճա-
նաբար լուսավորել, այսինքն տեղի է ու-
նենում խավարում։ Բնական է, որ մար-

դիկ չէին կարող անտարբեր լինել այդ
երեսւիթի նկատմամբ:

Նույնը պետք է ասել նաև Լուսնի խա-
վարելու մասին, երբ ամբողջ բնությունը
լուսավորված է լինում գիշերային սքանչելի
լուսատուվ, բայց անսպասելի կերպով որոշ
ժամանակ Լուսինը դադարում է լուսավո-
րելուց; Ահա այդ պատճառով էլ մարդիկ
շատ հին ժամանակներից սկսել են մեծ
հետաքրքրությամբ ուսումնասիրել խավա-
րումներ առաջանալու երեսւիթը:

Քանի դեռ մեր նախնիներին հայտնի
չէին խավարումներ առաջանալու պատ-
ճառները, ապա այդ երեսւիթները համա-
րում էին հրաշք, որի մնացորդները գոյու-
թիւն ունեն նաև մեր օրերում: Դեռևս
կան մարդիկ, որոնք հարկ եղած չափով
չեն պատկերացնում կամ բնավ չգիտեն
խավարումներ առաջանալու պատճառները:

Ահա այդ նպատակով էլ մենք ցան-
կանում ենք համառոտ կերպով բացատրել
Արեգակի և Լուսնի խավարումներ առա-
ջանալու պատճառները:

Հստ մեզ հասած պատմական տեղե-
կությունների՝ հնում խավարումների հար-
ցով հետաքրքրվել ու զբաղվել են խալ-
դերը, բաբելացիները, չիները և այլ ժո-
ղովուրդներ:

Խալդերը և չիները մոտ 2500 տարի
մեր թվականությունից առաջ, Երկարատե-
ղիտումների միջոցով հայտաբերել էին
խավարումների ժամանակը նախորոշելու
եղանակ:

Բավական է հիշատակել, որ չինական
հին տարեգրություններում արձանագրված
է մեր թվականությունից առաջ 2137 թը-
վականի սեպտեմբերի 22-ին տեղի ունե-
ցած Արեգակի խավարումը:

Ավելի ուշ ժամանակաշրջանում խա-
վարումների վերաբերյալ հիանալի միտք
է հայտնել հույն գիտնական Թալես Մե-
լիսացին, որն ապրել է 6-րդ դարում մեր
թվականությունից առաջ: Նա խավարում-
ները բացատրելու համար հայտնել է այն
միտքը, որ Լուսինը սեփական լույս չու-
նեցող խավար մարմին է, և մենք տես-
նում ենք նրան միայն Արեգակից ստացած
լույսի անդրադարձման շնորհիվ:

Այնուհետև հույն գիտնական Արիստո-
տելը նույնպես հայտնել է այն միտքը,
որ Լուսինը լուսավորում է ոչ թե սեփա-
կան լույսով, ալլ արեգակից ստացած լույ-
սից անդրադարձ լուսով: Նա բացա-
տրել է նաև Լուսնի ֆազերը առաջանալու
երևոյթը, որի իմանալը խավարումների
համար շատ կարևոր է: Նա հանգել է այն
մտքին, որ Լուսնի խավարում տեղի է ու-

նենում այն ժամանակ, երբ նա ծածկվում
է երկրի ձգած կոնածեւ ստվերով:

Արեգակի և Լուսի խավարումների
առաջանալու պատճառները հասկանալու
համար շատ կարևոր հարց է Արեգակի և
Լուսի տեսանելի շարժումների ուսումնա-
սիրությունը, որոնցով առաջին անգամ
զբաղվել է հույն խոշորագույն աստղա-
բաշխ Հիպպարχը, որն ապրել է 2-րդ
դարում, մեր թվականությունից առաջ:

Կարելի է այսպիսի շատ օրինակներ
բերել ցույց տալու համար, որ գեռ շատ
հին ժամանակներից սկսած որոշ ժողո-
վուրդներ գաղափար են ունեցել խավա-
րումների մասին: Պետք է հիշատակեր որ
երկնային մարմիններից ոչ միայն Արե-
գակն ու Լուսինն են խավարում, ալլ և
մյուս մոլորակների արբանյակները և շատ
աստղեր:

Երկնային մարմինների խավարում-
ներն ըստ իրենց բնույթի կարելի է բա-
ժանել երկու տիպի՝ առաջինը սեփական
լույս ունեցող մարմինների խավարում, և
երկրորդը՝ սեփական լույս չունեցող մար-
մինների խավարում:

Արեգակը և աստղերը սեփական լույս
ունեցող երկնային մարմիններ են, իսկ
մոլորակները և նրանց արբանյակները՝
սեփական լույս չունեցող մարմիններ,
որոնք լուսավորվում են Արեգակի լույսով.
Օրինակ, մեր Երկիրը մոլորակ է, իսկ Լու-
սինը՝ նրա արբանյակը, երկուսն էլ սեփա-
կան լույս չունեն:

Արեգակի խավարում աեղի է ունե-
նում այն դեպքում, եթե նրա տեսանելի
սկավառակը, մեր նկատմածք ծածկվում է
Լուսնի սկավառակով և մենք այդ ժամա-
նակ Արեգակի լուսավոր սկավառակի փո-

խարեն տեսնում ենք կուսնի խավար սկա-
վառակը, որը շատ կարճ ժամանակով փա-
կում է արեգակից դեպի ուղղ եկող ճառա-
գալթների ճանապարհը:

Սեփական լույս չունեցող երկնային
մարմինների խավարումներ տեղի են ու-
նենում այն ժամանակ, երբ կարճ ժամա-
նակով զրկվում են այն մարմի լույսից,
որով սովորաբար լուսավորված են լինում:
Օրինակ, Լուսինը, որպես սեփական լույս
չունեցող մարմին, խավարում է այն ժա-
մանակ, երբ երկիրը նրան որոշ ժամանակ
զրկում է Արեգակի ճառագայթներով լու-
սավորվելու հնարավորությունից, այսինքն
ծածկվում է Երկրի ստվերով:

Այն մարմիններն են ստվեր ունե-
նում, որոնք խավար, անթափանցիկ են.
Երբ նրանք մի կողմից լուսավորվում են՝
հակառակ կողմում առաջանում է ստվեր:
Մեր երկիրը հենց ալդակիսի մարմին է:

Ավելի պարզ հասկանալու համար որ
Երկրի չլուսավորված կողմում ստվեր պետք
է առաջանա, հիշենք բոլորիս հայտնի այն
երեսույթը, որն ամեն օր դիտում ենք. Երբ
Արեգակը ծագում է՝ նրա ճառագայթներն
ընկնում են սարերի, ծառերի, տների դե-
պի Արեգակն ուղղված կողմի վրա, իսկ
նրանց հակառակ կողմերում առաջանում
են դրանց ստվերները: Ալդպես էլ Երկրի
չլուսավորված կողմում է առաջանում
ստվեր: Քանի որ Երկիրը գնդաձև է, ապա
նրա ձգած ստվերն էլ կոնաձև է (գնդաձև
մարմինների ստվերը կոնաձև է լինում):

Բացի այդ, հայտնի է, որ Լուսինը
Երկրի արբանյակն է, և բոլորվում է
Երկրի շուրջը, հետևապես հնարավոր է որ
նա իր ճանապարհին Երբեմն ծածկվի Երկրի
ստվերով, այսինքն խավարի:

Նույն ձևով խավարում են նաև միտւ-

մոլորակների արբանյակները, ինչպես օրինակ, Յուղիտերի արբանյակները:

Եթե երևակալենք մեզ Յուղիտերի վրա՝ ապա ավելի հաճախակի խավարումներ կնկատենք, որովհետեւ Յուղիտերը մեկ լուսնի փոխարեն ունի 11 լուսինարբանյակ։

Եթե սիստեմատիկաբար հետևենք աստղալից երկնքին՝ կնկատենք, որ Լուսինն աստղերի մեջ շարժվելիս երբեմն իր սկավառակով ծածկում է որոշ աստղեր, այսինքն մեր նկատմամբ տեղի է ունենում տվյալ աստղերի խավարում, այսպես կոչված «աստղերի ծածկումը» Լուսնով»։

Սակայն երկնալին մարմինների խավարումներից, մասսայական դիտումների համար, ինչպես ասացինք, առանձնապես հետաքրքրական և ուշագրավ են Արեգակի և Լուսնի խավարումները, ուստի մենք կը ացացարենք միայն այդ երկու խավարումները։

ԱՐԵԳԱԿԻ ԽԱՎԱՐՈՒՄ


Խավարումներից ամենահետաքրքրականը և ուշագրավը Արեգակի խավարումն է:

Արեգակի խավարումն առաջանում է այն ժամանակ, երբ Երկիրն Արեգակի շուրջը և Լուսինը Երկրի շուրջը բոլորվելիս, երբեմն այդ երեք մարմիններն իրար նկատմամբ այնպես են դասավորվում, որ Էկլիպսատիկայի¹ հարթության մեջ գտնվում են մի ուղիղ զծի վրա այնպիսի դասավորությամբ, որ Լուսինը գտնվում է Արեգակի և Երկրի միջև, այսինքն նորալուսնի ժամանակ։ Հետագայում կտեսնենք, որ Լուսի խավարումները էլ կարող է տեղի ունենալ լիալուսնի ժամանակ։ Արեգակի խավարումը նորալուսնի ժամանակ և Լուսնի խավա-

¹ Էկլիպտիկա — խավարածիր. դա երկնային սփերի այն շրջանն է, որի հարթությունը համընկնում է Երկրի օրբիտի հարթությանը։ Արեգակը իր տեսանելի տարեկան շարժումը կատարում է Էկլիպտիտկայով։

Եւրանի քաղաքները (փուլի բլր) տառջանալու պատճառը, ովտեղից երկու
 է առ Աքեգակի, իսկայաբուժ կարող է ունելի ունենալ նորանուանի, իսկ լուսնի
 եռալուամբ լիւլուանի ժամանակի

Զգացք. Հ.



Երանեակ

Նորանակ

Երանեակ

Երանեակ

Պատճառ օրացուած

բումը լիալուսնի ժամանակ տեղի ունենալը պարզ երևում է կուսնի ֆազերի առաջացումը ցույց տվող գծագրից:

Հարց է ծագում, թե ինչու Արեգակի խավարում կարող է տեղի ունենալ միայն Արեգակի, կուսնի և Երկրի նման դասավորության գեպքում:

Այդ հարցին պատասխանելու համար բավական է հիշել որ Լուսինը լինելով խավար, անթափանցիկ մարմին, միայն այդ գեպքում կարող է փակել արեգակից դեպի մեզ եկող ճառագայթների ճանապարհը, որի հետևանքով Երկրի որոշ մասը շատ կարճ ժամանակ ամբողջովին կամ մասամբ զրկվում է Արեգակի լույսից: Այդ գեպքում մեզ թվում է, թե Արեգակը խավարեց, այնինչ իրականում Արեգակի հետ տվյալ մոմենտին ոչ մի նկատելի փոփոխություն չի կատարվում:

Այժմ ընթերցողները կարող են մի այս-
պիսի հետաքրքրական հարց տալ. Բնչպես
է, որ Հուսինը լինելով անհամեմատ փոքր
մարմին, այնուամենայնիվ թեկուզ շատ
կարճ ժամանակ կարողանում է ծածկել իրե-
նից շափաղանց մեծ մի մարմին՝ Արեգակը:

Այդ հարցին պատսասխանելու հոմար
բավական է ասել, որ Արեգակը թեև Հուս-
նից շատ մեծ է, բայց մեզանից ավելի
շատ հեռու է, քան Լուսինը: Արեգակի և
Երկրի միջին հեռավորությունը 149,500,000
կիլոմետր է, իսկ Լուսնի և Երկրի միջին
հեռավորությունը 384,500 կիլոմետր, այն-
պես որ Արեգակը մեզանից մոտավորապես
400 անգամ ավելի հեռու է, քան Լուսինը:
Ահա այդ պատճառով էլ Արեգակի և Լուսնի
տեսանելի սկավառակները գրեթե իրար
հավասար են: Բայց քանի որ Արեգակի և
Լուսնի հեռավորությունները Երկրից հաս-

տատուն չեն, այլ որոշ չափով փափոխ-
վում են, ուստի Արեգակի և Լուսնի տե-
սանելի սկավառակները նույնպես երբեմն
մեկը մլուսից աննշան չափով մեծ կամ
փոքր են երեսում, երբեմն էլ իրար հավա-
սար:

Այս հարցն ավելի լավ պատկերաց-
նելու համար բերենք այսպիսի մի պարզ
օրինակ: Եթե մեր ձեռքի բութ մատը
թևի երկարությամբ ուղղենք դեպի որևէ
շենք, փակենք մեկ աչքը ու դիտենք՝ կը-
տեսնենք, որ մատը շենքի շատ փոքր մասն
է ծածկում, իսկ եթե սկսենք մատն աստի-
ճանաբար մոտեցնել աչքին՝ կնկատենք, որ
գնալով ավելի մեծ մասն է ծածկում, այն-
պես որ ամբողջ շենքը կարելի է մատով՝
ծածկել:

Ճիշտ այդպես էլ Լուսինը մեզ շատ
մոտ և արեգակը շատ հեռու լինելու պատ-

ճառով խավարման ժամանակ ծածկում է
Արեգակի սկավառակը:

Այժմ ընթերցողները կարող են մի
այլ, ավելի հետաքրքրական հարց տալ-
քանի որ ամիսը մեկ անգամ լինում է նո-
րալուսին և ըստ մինչև հիմա մեր ասածի
Արեգակի խավարումը տեղի է ունենում
նորալուսինի ժամանակ, ապա ինչու լուրա-
քանչուր ամիսը մեկ անգամ Արեգակի
խավարում չի լինում:


Այդ հարցին պատասխանելու համար
բավական է ասել, որ Լուսնի և Երկրի օր-
բիտների հարթությունները չեն համընկ-
նում, այլ կազմում են 5 աստիճան 9 ըո-
պե (5°9') թեքվածության անկյուն (տես
պղծագիր 9): Դրա շնորհիվ էլ Լուսնի ըստ-
վերն Երկրի նկատմամբ մի փոքր դեպի
հլուսիս կամ դեպի հարավ է ընկնում և
առեն ամիս, կամ օգոստոս նորալուսինի ժա-

մանակ Արեգակի խավարում տեղի չի ու-
ռունենում։ Իսկ եթե Երկրի և Լուսնի օր-
բիտների հարթությունները համընկնեին,
այսինքն թեքվածություն չունենալին,
ապա ամիսը մեկ անգամ, այսինքն ամեն
նորալուսնի ժամանակ տեղի կունենար
Արեգակի խավարում, իսկ լիալուսնի ժա-
մանակ՝ Լուսնի խավարում։

Այս պատճառով նորալուսնի ժամա-
նակ Արեգակի խավարում տեղի է ունե-
նում միայն այն դեպքում, եթե Լուսինը
գտնվում է Երկրի օրբիտի և Լուսնի օր-
բիտի հարթությունների հատման կետե-
րից մեկում՝ հանգույցում¹, կամ նրան
բավականաշափ մոտ։ Ամեն նորալուսնի
ժամանակ Արեգակի խավարում տեղի չի

¹ Երկրի և Լուսնի օրբիտները հատվում են եր-
կու կետում, որոնք կոչվում են հանգույց։

ունենում, որովհետև Լուսնի մի հանգույցից մինչև մյուս հանգույցն անցնելը տեսվում է մոտավորապես կես տարի, այսինքն տարվա մեջ լինում է երկու խավարման շրջան:



Գծադ. 2,


Արեգակի և Լուսնի խավարում տեղի է ունենում միայն այն զեպքում, եթե Լուսինը գտնվում է հանգույցում կամ նրա մոտ՝ 1 և 3 դիրքերում։ Նորալուսնի ժամանակ՝ Արեգակի և լիալուսնի ֆումանակ՝ Լուսնի խավարում։

Արեգակի խավարումը լինում է երեք
տիպի. 1) լրիվ խավավում. 2) օդակածեվ
խավարում եվ 3) մասնակի խավարում:

ԱՐԵԳԱԿԻ ԼՐԻՎ ԽԱՎԱՐՈՒՄ

Արեգակի լրիվ խավարում տեղի է ու-
նենում այն դեպքում, եթբ Արեգակի սկա-
վառակը ամբողջովին ծածկվում է Լուսնի
սկավառակով։ Խավարման շերտի վալրե-
րում տիրում է կարճ դիշեր, երկնակա-
մարում սկսում են երևալ աստղեր և մոլո-
րակներ։ Արեգակի լրիվ խավարում լինում
է այն ժամանակ, եթբ Լուսնի տեսանելի
սկավառակը մի քիչ մեծ է լինում Արե-
գակի տեսանելի սկավառակից, որովհետե-
միայն այդ դեպքում Արեգակը կարող է
ամբողջութեամբ ծածկվել Լուսնի սկավա-
ռակով։ Խավարումն սկսում է Արեգակի

Նի կողմից և աստիճանաբար՝ խավարման
ֆազը մեծանալու շնորհիվ՝ միաժամանակ
սկսում է աստիճանաբար մթնել, իսկ երբ
Արեգակը լրիվ ծածկվում է՝ առաջանում է
կարճատես դիշեր, որից հետո նորից ըսկը-



Գծադ. 3.

Արեգակի լրիվ խավարման առաջացումը:
սում է լուսանալ: Արեգակի լրիվ խավա-
րումը տևում է շատ կարճ՝ մի քանի վայր-
կանից սկսած մինչև ամենաշատը՝ 7 ըոպե
40 վայրկան:

Արեգակի լրիվ խավարումը երեսում է
ոչ բոլոր տեղերից, այլ սիալն Երկրի մա-

կերևույթի սրոշ շեղտից Դա նըանից է,
որ Լուսնի ձգած լրիվ ստվերը Երկրի մա-
կերևույթի միայն փոքր մասն է ծածկում:

Արեդակի լրիվ խավարումը երևում է
Երկրի այն վայրերից, որտեղից անցնում է
Լուսնի լրիվ ստվերը: Միայն լրիվ խավար-
ման դեպքում է, որ Լուսնի լրիվ ստվերը
հասնում է Երկրի մակերևույթին:


Դա բացատրվում է հետևյալ կերպ:
Քանի որ Երկրի և Լուսնի միջև եղած հե-
ռավորությունը փոփոխվում է, այսինքն
Լուսինը Երկրահեռ կետում եղած ժամա-
նակ ունենում է 409,000 կմ հեռավո-
րություն և Երկրամերձ կետում՝ 360,000 կմ,
իսկ Լուսնի ստվերի առավելագույն Երկա-
րությունը հավասար է 380,000 կմ, հե-
տևապես հնարավոր է, որ Լուսնի ստվերը
Երբեմն հասնի Երկրին, ինչպես լրիվ խա-
վարման ժամանակ, և Երբեմն չհասնի, ինչ-
պես օդական խավարման ժամանակ:

Քանի որ Լուսնի ստվերը բավական
մեծ արագությամբ է շարժվում Երկրի մա-
կերևույթի վրա, ապա առաջանում է մո-
տավորապես 13.000 կիլոմետր Երկարու-
թյամբ լրիվ խավարման շերտ, որի լայնու-
թյունը տատանվում է մոտավորապես
100 – 200 կմ:

Խավարման շերտի լայնությունը և
Երկարությունը առարգեր խավարումների
ժամանակ տարբեր են լինում: Լրիվ խա-
վարման շերտի լայնությունը կախված է
Երկրի մակերևույթին հասած Լուսնի լրիվ
ստվերի կտրվածքի արամագծի մեծությու-
նից, որքան մեծ լինի այդ արամագիծը,
այնքան խավարման շերտը լայն կլինի,
և հակառակը: Դա նրանից է, որ ստվերը
կոնաձև է, այսինքն աստիճանաբար նեղա-
նում է և վերջանում սուր գագաթով:

Արեգակի երեք տեսակի խավարումնե-

Դիագ. 4.



— Լրու ասկարում
— թնանօսակ ասկարում
— Վլորոց քուօնակ լրու վլորոց
Տարերում օժանացակ ասկարում

Լուսնի լատիշտիկ Երկրի մակելեռութիւնը կը տա խավարման շերտով առաջացումը՝ կը բեր հաղալման շերտով, որոնք դիտվել են և պետք է դիտվեն,

ըից ամենաուշագրավը և գիտական դիօ-
տումներ կատարելու համար նշանակու-
թյուն ունեցողը լրիվ է:

ԱՐԵԳԱԿԻ ՕՂԱԿԱԶԵՎ ԽԱՎԱՐՈՒՄ

Արեգակի օղակաձև խավարում տեղի
է ունենում այն դեպքում, երբ խավար-
ման ժամանակ Լուսի տեսանելի սկավա-
ռակը փոքր է լինում Արեգակի տեսանելի
սկավառակից և Լուսինը մեր նկատմամբ
Արեգակի դեմով անցնելիս՝ նրանց կենտ-
րոնները համընկնում են, Լուսինը ծած-
կում է Արեգակի միայն կենտրոնական
մասը, իսկ եղրերը մնում են լուսավոր:
Դրա համար էլ կոչվում է օղակաձև խա-
վարում, ինչպես եթե մի մե գույնի գնդա-
ձև անթափանցիկ մարմին դրված լինի

մի քիչ ավելի մեծ, լուսավոր շրջանաձև
մարմնի վրա, այնպես որ երկսի կենտրոն-
ները համընկնեն, ապա փոքրի շուրջը
օղակի նման կմնա լուսավորված։ Ճիշտ
ալդպես էլ Արեգակի օղակաձև խավարման
դեպքում է լինում։ Դա հնարավոր է, որով-
հետև ինչպես ասացինք՝ Արեգակի և Լուս-
նի տեսանելի սկավառակների մեծությունը
փոփոխվում է՝ կախված Երկրի՝ Արեգակից
և Լուսնի՝ Երկրից ունեցած հեռավորու-
թյունների փոփոխումից։ Հետևապես, քա-
նի որ օղակաձև խավարման ժամանակ
Լուսնի սկավառակը փոքր է լինում, նշա-
նակում է Լուսինը Երկրահեռ կետում է
դժուվում, դրա պատճառով էլ Լուսնի ըստ-
վերը չի հասնում Երկրի մակերեսութին
(տես զծագիր 6), և օղակաձև խավարումը
Երեսում է միայն Երկրի այն վայրերից,
որոնք դժուվում են ստվերի զագաթի ուղ-

անցնելիս և Լուսինը Երկրի ամենահեռավոր
վոր կետում դտնվելու դեպքում ունենում
է ամենաերկար տևողությունը՝ 12 րոպե
45 վայրկյան, որովհետև Երկրի իր առանցքի
շուրջը պտտվելու և Լուսնի ստվերի շար-
ժումը նույն ուղղությունն ունեն և բացի
այդ Երկրի հասարակածալին մասը ունե-
նում է մաքսիմում գծալին արագություն։

Եթե լուսնի ստվերի շարժումը Երկրի
իր առանցքի շուրջը պտտվելու նկատմամբ
հակառակ ուղղություն ունենար, ապա
թե՛ օդակածեւ և թե լրիվ խավարման տևո-
ղությունը կլիներ չափազանց կարճ։

Օդակածեւ խավարման շերտի լայնու-
թյունը լինում է մոտավորապես 300—400
կիլոմետր։

Երբեմն այնպես է լինում, որ Երկ-
րագնդի որոշ մասից խավարումը երևում
է լրիվ։ Նշանակում է այդ մասերում Լուս-

նի ստվերի ծայրը հասնում է Երկրի մա-
կերևութին, իսկ որոշ տեղերից նույն խա-
վարումը երևում է օղակաձև, նշանակում
է ստվերի ծայրը չի հասնում Երկրի մա-
կերևութին:

Օրինակ, եղել է խավարում, որ Ամե-
րիկայում դիտվել է որպես օղակաձև խա-
վարում, Ատլանտյան օվկիանոսում որպես
լրիվ, բայց շատ կարճ տևողությամբ, իսկ
Խաղանիայում և Ֆրանսիայում դիտվել է
որպես օղակաձև խավարում:


ԱՐԵԳԱԿԻ ՄԱՍՆԱԿԻ ԽԱՎԱՐՈՒՄ

Մասնակի կոչվում է Արեգակի այն
խավարումը, երբ Արեգակի տեսանելի
սկսվառակի միայն որոշ մասն է ծածկվում
կուսով: Մասնակի խավարման ժամանակ
Արեգակը մի կողմից առտիճանաբար կու-

նով ծածկվելու շնորհիվ սկսում է խավարս
ման ֆազը մեծանալ և որոշ մեծության
համար հետո՝ նորից սկսում է փոքրանալ։
Մասնակի խավարման ժամանակ Արեգակի
և Լուսնի տեսանելի սկավառակները կարող
են հավասար մեծություն ունենալ։

Լուսինը բացի լրիվ ստվերից՝ ունի
նաև կիսաստվեր, որի Երկրի մակերևույ-
թին հասած մասի կտրվածքի տրամադիճն
անհամեմատ ավելի մեծ է։ Այդ պատճա-
ռով էլ մասնակի խավարման շերտի լայ-
նությունը նույնպես մեծ է լինում, որով-
հետև մասնակի խավարումը երկում է Երկ-
րագնդի այն վայրերից, որոնք ընկնում են
Լուսնի կիսաստվերի տակ։

Մասնակի խավարման շերտի լայնու-
թյունը տարբեր խավարումների ժամանակ
նույնպես տարբեր է լինում և մոտավո-
րապես հավասար է 7000 կիլոմետրի։



1001

卷之三

৭০

Խավարման շերտի կենտրոնական մասերից դիտողների համար երևում է տվյալ խավարման ամենամեծ ֆազը, խավարման շերտի սահմանում գտնվողների համար՝ անենափոքը ֆազը, իսկ խավարման շերտից դուրս գտնվողներին խավարումը չի երևում:

Այժմ հետաքրքրական է իմանալ, թե տարվա մեջ Արեգակի քանի խավարում կտրող է տեղի ունենալ:

Տարվա մեջ տեղի է ունենում ամենաքիչը երկու և ամենաշատը հինգ Արեգակի խավարում։ Վերջին դեպքը հազվադյուր է լինում. սովորաբար լինում է 2-4 խավարում։

Ամեն տարի Արեգակի առնվազն՝ երկու խավարում լինելը բացատրվում է հետեւյալ կերպ։ Մենք ասացինք, որ Արեգակի խավարում առաջանալու պայմանը նորալուսին լինելն է, և բացի այդ, կուսնի

դանվելը հանգույցում կամ նրան բավա և
կանաչափ մոտ Հայտնի է, որ Արեգակի
խավարման միջակայքը, ուր տեղի են ու-
նենում խավարումներ, հավասար է 36 օրվա,
այսինքն 18 օր հանգույցի մի կողմում և 18
օր մյուս կողմում։ Հետեապես Լուսինը այդ
36 օրվա ճանապարհն անցնելու ժամանակ
անպարման Արեգակի առնվազն մեկ խավա-
րում է լինում, որովհետեւ մի նորալուսնից
մինչև հաջորդն առաջանալու պարբերաշրը-
ջանը ավելի փոքր է՝ հավասար $29\frac{1}{2}$ օր-
վա, այսինքն խավարման միջակայքն անց-
նելու ժամանակ առնվազն մեկ անգամ
նորալուսին է լինում։ Քանի որ Լուսինը
մի հանգույցից մինչև մյուս հանգույցով
անցնելը տևում է մոտ կես տարի, ապա
հասկանալի է, որ տարվա մեջ երկու հան-
գույցով էլ անցնում է, հետեապես պետք է
ամեն տարի առնվազն Արեգակի երկու
խավարում տեղի ունենա։ Լուսինը խա-
վարման միջակայքն անցնելիս երբեմն

տեղի է ունենում երկու խավարում, մեկը
այն դիպում, երբ նորալուսին է լինում՝
խավարման միջակայքի սկզբում, մեկ էլ
հնարավոր է լինում վերջում։ Նշանակում
է երկու հարևան ամիսներում երկու իրար
հաջորդող նորալուսնի ժամանակ կարող է
տեղի ունենալ Արեգակի երկու խավարում։

Արեգակի հինգ խավարում հնարավոր
է միայն այն տարիներում, երբ Լուսինն
անցնում է հանգույցներից մեկով հունվա-
րին, մըուսով հունիսին, հնարավոր է դառ-
նում նաև դեկտեմբերին, այսինքն տարին
երբեմն ունենում է խավարումների երեք
շրջան։ Օրինակ, 1935 թվականին տեղի է
ունեցել Արեգակի հինգ խավարում, հուն-
վարի 5-ին, փետրվարի 3-ին, հունիսի
30-ին, հուլիսի 30-ին և դեկտեմբերի 25-ին։
Այդ խավարումներից առաջին 4-ը եղել են
մասնակի, իսկ վերջինը օղակաձև

Երիվ և մասնակի խավարումների շերտի մասին ավելի պարզ պատկերացում ունենալու համար բերենք, մի օրինակ։

1936 թվականի հունիսի 19-ին տեղի ունեցած Արեգակի լրիվ խավարման շերտը սկսել է Միջերկրական ծովից, անցել է Հունաստանով, Սև ծովով, անոռնետեւ շարունակվել է Սովետական Միության տերիտորիայում, որտեղ սկսել է Տուապսեի մոտ և անցել է Հյուսիսական Կովկասով, Պետրոպավլովսկ, Օմսկ, Սվորոդնի, Խաբարովսկ, ապա անցել է Ճապոնիայի հյուսիսական մասով և վերջացել Խաղաղ օվկիանոսում։


Այդ խավարման շերտի երկարությունը եղել է մոտավորապես 12,000 կմ, իսկ լայնությունը՝ 130 կիլոմետր։

Այդ խավարումը հայաստանից դիտվել է որպես մասնակի խավարում, մաքսիմում ֆազի ժամանակ կուսնով ծածկվել է Արեգակի սկավառակի մոտ 0,85 մասը։

ՀՈՒՍՆԻ ԽԱՎԱՐՈՒՄ

Ինչպես ասացինք Արեգակի խավարումը բացատրելիս, նույնը պետք է ասել նաև Լուսնի խավարումը բացատրելիս, որ Երկիրն Արեգակի շուրջը և Լուսինը Երկրի շուրջը բոլորվելիս երբեմն իրար նկատմամբ այնպես են դասավորվում, որ Եկլիպտիկայի հարթության մեջ գտնվում են մի ուղիղ գծի վրա։ Արեգակի, Երկրի, և Լուսնի արդարիսի դասավորության դեպքում, հնարավոր է Լուսնի խավարում, Եթե Երկիրը գտնվում է Արեգակի և Լուսնի միջև, այսինքն լիալուսնի ժամանակնայտնի է, որ Երկիրը սեփական լուս չունեցող խավար, անթափանցիկ գունդ է, և միշտ դեպի Արեգակը նայող կողմը լուսավորվում է, իսկ հակառակ կողմում ձըգվում բավական մեծ կոնաձև ստվեր, որի

Երկարությունը հավասար է մոտ 1.400.000
 կիլոմետրի: Իսկ Լուսինը Երկրի շուրջը
 բոլորվելիս ունենում է ամենաշատը մո-
 տավորապես 409.000 կիլոմետր հեռավո-
 րություն: Հետևապես հասկանալի է, որ
 Լուսինը Երկրի շուրջը բոլորվելու ճանա-
 պարհին, լիալուսնի ժամանակ կարող է
 ծածկվել Երկրի ստվերով, այսինքն տեղի
 կունենա Լուսնի խավարում:



Գծադ. 8.

Լուսնի խավարման տռաջացումը:


Հստ մեր բացատրածի՝ ընթերցողը
 կարող է մի շատ հետաքրքրական հարց
 տալ քանի որ Լուսինը մոտավորապես
 ամիսը մեկ անգամ բոլորվում է Երկրի

շուրջը և ամիսը մեկ անգամ էլ առաջա-
նում է լիալուսին, ապա ինչու ամեն
ամիս կուսնի խավարում տեղի չի ունե-
նում։ Եթե կուսնի օրբիտի հարթությունը
և Երկրի օրբիտի հարթությունը (էկպա-
տիկալի հարթությունը) համընկնեին,
ապա յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ
լիալուսի ժամանակ տեղի կունենար կուս-
նի խավարում, բայց տեղի չի ունե-
նում այն պատճառով, որ Երկրի և կուսնի
օրբիտների հարթությունները, ինչպես
ասել ենք, չեն համընկնում, այլ իրար
հետ կազմում են 5 աստիճան 9 ըոպե-
թեքվածությամբ անկյուն։ Այդ պատճա-
ռով էլ ամեն ամիս լիալուսի ժամանակ
խավարում տեղի չի ունենում, որովհետեւ
այդ թեքության պատճառով կուսինը Երկ-
րի ստվերի նկատմամբ մի փոքր դեպի
հյուսիս կամ հարավ է անցնում, այլ կերպ

տառձ՝ Լուսինը ստվերի տակից կամ վրա-
ից է անցնում, այսինքն չի խորասուղ-
փում ստվերի մեջ։

Ինչպես տեսանք, Լուսնի խավարում
առաջանալու համար անհրաժեշտ է, որ լինի
լիալուսին և միաժամանակ գտնվի իր օրբիտի
երկու հանգույցներից մեկում կամ նրանց
բավականաչափ մոտ, ոչ ավել 11^0 -ից,
այսինքն խավարումը կարող է սկսվել
սիայն Լուսինը հանգույցից 11^0 հեռավորու-
թյունից սկսած, եթե լիալուսին է լինում։
Նշանակում է այն միջակայքը, հաշված
հանգույցի երկու կողմերում՝ որտեղ կա-
րող է տեղի ունենալ Լուսնի խավարում,
հավասար է 22^0 -ի կամ նույնն է ասել 22
օրվա, որովհետև Երկիրը խավարման մի-
ջակայքի սկզբից մինչև վերջը եղած 22^0
ճանապարհն անցնելը տևում է մոտավո-
րապես 22 օր (տես գծագիր 9):

Ալժմ տեսնենք, թե տարվա մեջ Լուս-
նի քանի խավարում կարող է տեղի ունե-
նալ։ Տարվա մեջ սովորաբար լինում է
Լուսնի 1—2 խավարում, հազվագյուտ դեպ-
քերում՝ Յ խավարում, որոշ տարիներում
էլ բոլորովին Լուսնի խավարում չի լինում։



Գծադ. 9.

Խավարման միջակայքը, որտեղ տեղի է ունենում Լու-
սնի խավարումներ. ցույց է տրված խավարման սկիզբը և վերջը
այսինքն մինչ հանգույցով անցնելը Լուսինն աստիճանաբա-
խորասուզվում է երկրի ստվերի մեջ և հետո աստիճանաբա-
զուրս գալիս ստվերից։

Տարվա մեջ բոլորովին Լուսնի խա-
վարում տեղի չունենալը բացատրվում է
նրանով, որ Լուսնի խավարման միջա-
կայքը՝ հաշված հանգույցի երկու կող-

մում, այսինքն խավարում տեղի ունենալու ճանապարհը Լուսնի անցնելու համար ավելի կարճ է տևում, քան մի լիալուսնից մինչև հաջորդ լիալուսին առաջանալու ժամանակը։ Դրա համար էլ հնարավոր է, որ Լուսինը հանգույցներով անցնելիս լիալուսին չլինի, հետևապես Լուսնի ոչ մի խավարում տեղի չի ունենա։ Օրինակ 1940 թ. Լուսնի խավարում չի եղել։

Տարվա մեջ Լուսնի երեք խավարում լինելու դեպքը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ առաջին խավարումը տեղի է ունենում հունվարին, երկրորդը՝ հունիսին, երրորդը՝ հնարավոր է դառնում դեկտեմբերին։ Վերջին անգամ Լուսնի երեք խավարում տեղի է ունեցել 1898 և 1917 թվականներին և ըստ հաշիվսերի պետք է նորից տեղի ունենա 1982 թվականին։

Լուսնի խավարումը լինում է երկու
տեսակ՝ լրիվ և մասնակի:

Լուսնի լրիվ խավարում տեղի է ու-
նենում այն ժամանակ, երբ Լուսինն ամ-
բողջությամբ ծածկվում է երկրի լրիվ
ստվերով, իսկ մասնակի խավարում, երբ
Լուսնի տեսանելի սկավառակի միայն որոշ
մասն է ծածկվում երկրի լրիվ ստվերով:

Այժմ ընթերցողը կարող է այսպիսի
հարց էլ տալ. ինչու Լուսնի օղակածն խա-
վարում տեղի չի ունենում։ Դա բացատըր-
վում է նրանով, որ Լուսնի տեսանելի
սկավառակի տրամագիծը միշտ փոքր է
լինում երկրի լրիվ ստվերի այն մասի
տրամագծից, որով խավարումների ժամա-
նակ Լուսինն անցնում է։

Լուսնի խավարման անողությունը
կախված է նրանից, թե Լուսինը երկրի
ստվերի որ մասովն է անցնում։ Լուսինը

սրբան մոտ գտնվի Երկրին, այսքան ավելի
երկար կտևի խավարումը, իսկ որքան հեռու՝
այսքան կարճ, որովհետև Երկրի լրիվ
ստվերը կոնածե է, ուստի հասկանալի է,
որ Լուսինը Երկրին մոտ եղած դեպքում
ավելի երկար ժամանակ կպահանջվի ըստ-
վերով անցնելու համար, իսկ հեռու եղած
դեպքում՝ կարճ։

Երբ խավարման ժամանակ Լուսինն
անցնում է Երկրի ստվերի կենտրոնով,
ապա լրիվ խավարման տևողությունը հաս-
նում է մինչև 2 ժամվա, իսկ ամբողջ խա-
վարման տևողությունը, այսինքն խավար-
ման սկզբից մինչև վերջը երբեմն հասնում
է մոտ $4\frac{1}{2}$ ժամի։

Խավարման ժամանակ Լուսինը նախ-
քան լրիվ ստվերով ծածկվելը ծածկվում է
կիսաստվերով, որը սովորաբար աննկա-
տելի է լինում, որովհետև Երբ Լուսինը

ծածկվում է կիսաստվերով, նրա պայծառությունն այնքան աննշան չափով է նրա վազում, որ այդ փոփոխությունը գընթե հնարավոր չէ նկատել:

Լուսնի մասնակի խավարումն սկսվում է այն մոմենտից, երբ Լուսնի տեսանելի սկավառակն սկսում է ծածկվել Երկրի լրիվ ստվերով, իսկ լրիվ խավարումն սկսվում է այն մոմենտին, երբ Լուսինն ամբողջությամբ ծածկվում է լրիվ ստվերով:

Լուսնի խավարումն առանձնահատուկ է այն տեսակետից, որ երևում է, ոչ թե Երկրի որոշ մասերից, այլ այն բոլոր վայրերից, որտեղից խավարման ժամանակ Լուսինը հորիզոնում երևում է, իսկ Արեգակի խավարումը, ինչպես ասացինք, երևվում է միայն որոշ վայրերից:

Լուսնի խավարումն սկսվում է նրա սկավառակի արևելյան կողմից, որովհետեւ


Հուսինն արևմուտքից դեպի արևելք է շարժվում, այդ պատճառով էլ նրա արեւից յան կողմն և սկսում ծածկվել ստվերով, այսինքն խավաշումն սկսվում է արևելյան կողմից և վերջանում արևմտյան կողմում:

Լրիվ խավարման ժամանակ Հուսինը բոլորովին չի զրկվում Արեգակի լույսից, այլ ունենում է մոտավորապես կարմիր պղնձի գույն, որն ոչ թե իր սեփական գույնն է, այլ առաջանում է արեգակից եկող և Երկրի մթնոլորտում բեկվող ճառագայթներից, որոնք թափանցում են Երկրի ստվերի մեջ։ Լրիվ խավարման ժամանակ Հուսինը կարմրավուն գույնի է երևում նրա համար, որ Երկրի ստվերի ներսը թափանցում են գլխավորապես կարմիր գույնի ճառագայթները, իսկ մյուս գույնի ճառագայթները, նախքան ստվերի ներսը թափանցելը, կլանվում են Երկրի մթնոլորտի կողմից։

Արեգակի և Լուսնի խավարումներն
ընդհանուր գծերով բացատրելուց հետա,
ավելորդ չենք համարում ավելի հանրա-
մատչելի և մասսայական դարձնելու նպա-
տակով նկարագրել Արեգակի և Լուսնի խա-
վարումները ցուցադրելու հասարակ փորձ:

Դրա համար պետք է վերցնել Էլեկտ-
րական կաթնագույն կլոր լամպ, կամ սո-
վորական լամպ և մի քանի շերտ ծխախո-
տի թղթով փաթաթել։ Փորձը ցուցադրե-
լու ժամանակ այդ լամպը պետք է պատ-
կերացնել որպես Արեգակ։ Այնուհետև
պետք է վերցնել երկու տարբեր մեծու-
թյուն ունեցող գնդեր, որոնցից մեկը
պատկերացնել որպես Երկիր, իսկ փոքրը՝
Լուսին։ Հարմար է մեծ գունդը թողնել
անշարժ, իսկ փոքրը շարժական, այնպես
որ հնարավոր լինի փոքրը պտտեցնել մեծի
շուրջը։ Փոքր գունդը պետք է այնպիսի

հեռավորություն ունենա, որ ստվերն ընկնի
մեծի վրա:



Գծադ. 10.

Արեգակի և Լուսնի խավարումները ցուցադրելու
փորձի սխեմա:

Այդ երեք մարմինները պետք է դա-
սավորել սեղանի կամ հարթ պատվանդանի
վրա այսպես, որ գտնվեն մի ուղիղ գծի
վրա, ինչպես ցույց է տրված՝ գծադրում։
Փոքը գունդը լամպի և մեծ գնդի միջև
եղած դեպքը համապատասխանում է Արե-
գակի լրիվ խավարման դեպքին, իսկ լամ-
պի նկատմամբ մեծ գնդի հակառակ կողմում
եղած դեպքը՝ Լուսնի խավարման։

Փորձը պետք է ցուցադրել մութ սե-
նյակում, ուր կողմնակի լույսեր չպետք է
լինեն:

Ցանկալի է խավարումների երեսույթը
ցուցադրելու այդպիսի փորձեր և զբույց-
ներ կազմակերպել ամենից առաջ դպրոց-
ներում և զյուղական ակումբներում:

ԱՐԵԳԱԿԻ ԽԱՎԱՐՈՒՄԸ ԴԻՏԵԼՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ մի քանի խոսք ասենք Արե-
գակի խավարումը դիտելու նշանակույթյան
մասին: Նախքան այդ հարցին անցնելը,
համառոտ կերպով պատմենք, թե ինչ է
իրենից ներկայացնում Արեգակը:

Արեգակը մի դազարին շիկացած հրս-
կայական գունդ է, որի մեծության մասին
պատկերացում ունենալու համար բավական

է հիշատակել, որ նրա ծավալը Երկրի ծավալից $1.300.000$ անգամ մեծ է, իսկ մասսան՝ $333,000$ անգամ։ Արեգակի մակերևույթի վրա ջերմաստիճանը հավասար է 6000 աստիճանի, իսկ կենարոնում՝ ենթադրվում է մոտ $40.000.000$ աստիճան։

Արեգակը էներգիայի վիթխարի աղբյուր է։ Արեգակի ճառագայթած էներգիան այնքան մեծ է, որ մեր Երկրին հասնում է նրա միայն $\frac{1}{2,200,000,000}$ մասը։ Արեգակի էներգիայի հզորության մասին ընդհանուր պատկերացում ունենալու համար բավական է նշել, որ նրա մեկ քառակուսի մետր մակերևույթի վրա էներգիան այնքան մեծ է, որ կարող է աշխատեցնել $85,000$ ձիու ուժի կարողությամբ մեքենա։ Արեգակի ուսումնասիրությունը առաջնակարգ հարց է, որը հնարավորություն է


տալիս գաղափար կազմել ընդհանրապես
աստղերի մասին։ Բացի այդ, Արեգակը,
ինչպես ասացինք, ջերմության և լույսի
հակառական աղբյուր է, որի շնորհիվ պահ~
պանվում է Երկրի վրա գոյություն ունե~
ցող կյանքը։

Քանի որ Արեգակը ուսումնասիրելու
մի շարք կարևոր գիտական նշանակու~
թյուն ունեցող հարցեր կարելի է մանրա~
զնին կերպով հետազոտել միայն լրիվ խա~
վարման ժամանակ, դրա համար էլ խավա~
րումից մի քանի տարի առաջ դիտնական~
ները պատրաստում են հատուկ գործիք~
ներ, կազմակերում էքսպեդիցիաներ և
ուղևորվում լրիվ խավարման շերտը դի~
տումներ կատարելու համար։ Արեգակի
լրիվ խավարումը դիտելուն մասնակցում
են գրեթե աշխարհի բոլոր աստղադիտա~
րանները։ Բացի այդ, Արեգակի խավա~
րումը դիտում են բազմաթիվ աստղաբաշ~
խություն սիրողներ և դպրոցականներ։



Գծագ. 21.

Աքեապսակի ձևը, լուսանկարված 1936 թ. հունիսի
19-ի խավարժոն Ժամանակ



Դծագ. 12.

Արևապսակը նկարված 1882 թ. մայիսի 17-ի
խավարման ժամանակու լրիվ խավարման ժամանակ երե-
վացել է գիսաստղ,

Արեգակի լրիվ խավարման ժամանակ
ուսումնասիրելու հիմնական հարցերից մեկը
Արեգակի մթնոլորտի վերին շերտի, այ-
սինքն արեվապսակի ուսումնասիրու-
թյունն է, որովհետեւ դա միան լրիվ խա-
վարման ժամանակ է լավ երևում:


Լրիվ խավարման ժամանակ, եթե
Արեգակի սկավառակը մեր նկատմամբ
ծածկվում է Լուսնի սկավառակով, Արե-
գակի պայծառ մակերեսութի փոխարեն
տեսնում ենք Լուսնի խավար սկավա-
ռակը և դրա չորս կողմում համեմատաբար
թույլ լուսավորված մի շերտ որի պայ-
ծառությունը դեպի եզրերն աստիճանաբար
աղոտանում է և վեր ը ձուլվում երկնքի
գույնին: Առ լուսավորված շերտը կոչվում
է արեապսակ: Արեապսակի պայծառու-
թյունը մոտ երկու անգամ ավելի թույլ
է լինում, քան լուսնի պայծառությունը

լիալուսնի ժամանակ։ Արևապսակը Արեւ-
դակի ամենամեծ շերտն է, ունի մոտ
2.000.000 կմ բարձրություն։ Ուսումնա-
սիրությունները զույց են տվել, որ արևա-
պսակը բաղկացած է գագերից և հավանա-
բար փոշիանման պինդ մասնիկներից։

Արեգակի լրիվ խավառումների ժամա-
նակ գլխավորապես կատարում են սպեկ-
տրալ լուսանկարչական դիտումներ արևա-
պսակի քիմիական բաղադրությունը և ձեր
որոշելու համար։ Ուսումնասիրությունը
ցույց է տվել, որ Արևապսակի ձեր վո-
փոխավորմ է արևաբճերի փոփոխման հետ
(տես գծագիր 13)։ Արևապսակի ձեի փոփո-
խությունը որոշում են լրիվ խավարումների
ժամանակ կատարված լուսանկարումներն
իրար հետ համեմատելով։

Արեգակի լրիվ խավարման ժամանակ

9.διωτ. 13.



կարևոր հարց է նաև քրոմոֆերայի ուսումնասիրությունը։ Լրիվ խավարման ժամանակ Լուսնի խավար սկավառակի շուրջը երեսում է մի լուսավորված նեղ շերտ, որը կոչվում է քրոմոֆերա և դարձյալ Արեգակի շերտերից մեկն է։

Տելեսկոպով դիտելիս քրոմոֆերան երեսում է բազմաթիվ կարմրավուն բոցավառ լեզվակների ձևով։ Հետազոտությունը ցույց է տվել, որ քրոմոֆերան հիմնականում բաղկացած է ջրածնից և մասամբ հելիումից ու կալցիումից։ Քըո նոսֆերայի տարբեր մասերից երբեմն շատրվանի պես ժայթքում են շիկացած գաղեր, այսպես կոչված հրվիժակներ—պրոտոբերանիներ, որոնց բարձրությունը Արեգակի մակերեսույթից երբեմն հասնում է մոտ 50.000—700.000 կիլոմետրի։ Պրոտոբերանիները տարբեր ձևեր են ունենում և

արագ փոփոխվում են: Պրոտուբերանսները
հիմնականում կազմված են ջրածնից և
կալցիումից, այժմ հայտաբերված են նաև
ալ դաղեր:

Խրոմոսֆերայի և պրոտուբերանսների
ուսումնասիրությունը ավելի նպաստավոր
է լրիվ խավարման ժամանակ, բայց կա-
րելի է ուսումնասիրել նաև առանց խա-
վարումների: Պրոտուբերանսները լինում են
տարբեր ձևի:

Բացի նշան հարցերից, Արեգակի լրիվ
խավարման ժամանակ դիտում և ուսումնա-
սիրում են նաև դիտական մեծ հե-
տաքրքրություն ներկայացնող ալ հար-
ցեր:

Այնուհետև շատ հետաքրքրական է
Արեգակի լրիվ խավարման ժամանակ կեն-
դանիների, թուչունների և բույսերի վերա-
բերյալ դիտումներ կատարելը: Հայտնի է,

9834.2.11.
प्राण एवं पृथिवी का अध्ययन



որ խավարման ժամանակ ձիերը, կովերը,
ջները և այլ ընտանի կենդանիներ ան-
հանգստանում են, անսովոր շարժումներ
կատարում։ Լրիվ խավարման ժամանակ
որոշ թոշուններ, օրինակ հավերը, մտնում
են իրենց բները, իսկ զիշերային թոշուն-
ները ընդհակառակը, դուրս են դալիս
բներից, ինչպես ամեն երեկո, լրիվ խավա-
րումը վերջանալու պահին աքլորները կան-
չում են, ինչպես ամեն օր լուսաբացին։

Արեգակի լրիվ խավարման ժամանակ
որոշ բույսեր նույնպես անհանգստանում
են։ Այն ծաղիկները, որոնց պսակները բաց-
վում են Արեգակի ճառագայթները նրանց
վրա ընկնելու ժամանակ, լրիվ խավարման
ժամանակ փակվում են, ինչպես ամեն զի-
շեր, իսկ այն բույսերը, որոնց պսակները
փակված են լինում արև ժամանակ, խա-

վարժան դեպքում բացվում են։ Մենք գիտենք որ արևածաղիկը դլուխը միշտ ուղղում է դեպի Արեգակը, բայց երբ լրիվ խավարում է լինում, նա սկսում է դլուխը թեքել դեպի արևելք, որպեսզի առավոտյան ուղղված լինի դեպի Արեգակը, ինչպես ամեն օր է անում մայրամուտից հետո։

Վերջապես պետք է հիշեմ որ թե՛ս սուվորական և թե՛ խավարումների ժամանակ Արեգակը չի կարելի դիտել սովորական օկուլյար ունեցող տելեսկոպներով, սովորական հեռադիտակներով և երկուուցիկ ապակիներով, որովհետև կարող է աչքը ֆնասվել՝ կուրանալ։ Մասսայական դիտումների համար նպատակահարմար է դիտել սևացրած ապակով կամ սև գույնի պլյոնկալով և կամ լուսանկարչական ներգատիվով։

Ս Ա Ր Ա Ս

Արեգակի և Լուսնի խավարումները
տեղի են ունենում ոչ թե՝ պատահական
կերպով, այլ որոշակի պարբերությամբ։
Դեռևս մեզանից 4500 տարի առաջ քաղ-
դեացիները, չիները, բաբելացիները հայ-
տնաբերելէին, որ Արեգակի և Լուսնի խա-
վարումները կրկնվում են 18 տարի 11 օր և
8 ժամ պարբերաշրջանում, որն անվանել
էին «Սարոս»։ Դա բացատրվում է նրանով,
որ Արեգակի, Երկրի, Լուսնի և լուսնի հան-
գուցի շարժումներն այնպես են կատարվում,
որ իրար նկատմամբ ունեցած նույն դասա-
վորությունը կրկնվում է յուրաքանչյուր 18
տարի 11 օր 8 ժամը մեկ անգամ։ Եթե
խավարումների կրկնման պարբերաշրջանի
ընթացքում 4 նահանջ տարվա փոխարեն
5 նահանջ¹ տարի է լինում, ապա պետք
է պարբերաշրջանը, այսինքն «սարոսը»

¹ Նահանջ կոչվում է այն տարեթիվը, որն առանց
մասնաւորդի բաժանվում է 4-ի վրա,

18 տարի 11 օր 8 ժամի փոխարեն հաշվել
18 տարի 10 օր 8 ժամ, որը նշանակու-
թյուն ունի խավարումների ժամանակը
որոշելու համար։ Սարոսի միջոցով հեշտու-
թյամբ կարելի է մոտավոր ճշտությամբ
որոշել ցանկացած թվականի խավա-
րումների ժամանակը։ Եթե մեզ հայտնի
է որևէ ժամանակաշրջանի համար 18 տար-
վա ընթացքում տեղի ունեցած կուսնի
և Արեգակի խավարումների ժամանակը,
ապա կարելի է որոշել անցյալում տեղի
ունեցած և հետագայում տեղի ունենալիք
խավարումների ժամանակը։

Դրա համար բավական է վերցնել Արե-
գակի կամ կուսնի խավարումներից որևէ
մեկի ժամանակը և դրան գումարել 18
տարի 11 օր 8 ժամ։ Ստացած պատասխանը
ցույց կտա տվյալ խավարման հաջորդ ան-
գամ կրկնվելու ժամանակը, իսկ հանելու
դեպքում կստանանք տվյալ խավարման

Նախավերջին անգամ տեղի ունեցած լսութանանության ժամանակը:

Այս եղանակով վաղ անցյալում տեղի ունեցած խավարումների ժամանակը որոշելը նշանակություն ունի որոշ պատճական նշանավոր դեպքերի ժամանակը որոշելու կամ ճշտելու համար:

Ավելի պարզ հասկանալու համար խոսենք օրինակով:

Ենթադրենք ցանկանում ենք որոշել, թե 1936 թվականի հունիսի 19-ին ժամը 5-ին տեղի ունեցած բռլորիս հայտնի Արեգակի լրիվ խավարումը էլի երբ պետք է տեղի ունենա։ Դրա համար պետք է կատարել հետևյալ թվաբանական պարզ հաշիվը.

+	1936	թ.	հունիսի	19	5	ժամ	
			18 տ.	11	օր	8	ժամ
	1954	թ.	հունիս	30	օր	13	ժամ

Նշանակում է 1936 թ. հունիսի 19-ին
տեղի ունեցած Արեգակի լրիվ խավարումը
կրկնվելու է նաև 1954 թվականի հունիսի
30-ին և այդպես շարունակ:

Հաշվենք նաև 1938 թվականին տեղի
ունեցած Լուսնի լրիվ խավարման ժամա-
նակը: Հաշվումը կատարում ենք այնպես,
ինչպես կատարեցինք Արեգակի համար:
Ստորև բերված աղյուսակից վերցնում ենք
այդ խավարման ժամանակը և ավելացնում
18 տարի 10 օր 8 ժամ (11 օրվա փոխա-
րեն 10 օր ենք վերցնում, որովհետեւ¹
1938 թ. սկսած 18 տարվա ընթացքում
հինգ նահանջ տարի է լինելու) այսինքն՝

	1938 թ.	նոյեմբեր	7	22	ժամ
+	18 տ.		10	օր	8 ժամ
—	1956 թ.	նոյեմբեր	18	6	ժամ

Նշանակում է 1938 թվականի նոյեմ-
բերի 7-ին տեղի ունեցած Լուսնի լրիվ

խավարումը կրկնվելու է 1956 թվականի
նոյեմբերի 18-ին ժամը 6-ին:

Ինչպես տեսնում ենք, այս եղանակով
կարելի է խավարումների ժամանակը որ ո-
շել մոտավոր ճշտությամբ:

Սակայն երբ հետազայտման հարավոր
դարձավ ավելի ճշգրիտ կերպով ուսումնա-
սիրել Երկրի և Լուսնի շարժումները, ապա
աստղաբաշխները հնարավորություն ունե-
ցան չափազանց մեծ ճշտությամբ ոչ միայն
խավարումների ժամանակը որոշել, առևի
խավարումների ֆազերի սկիզբը և վերջը,
այսինքն, թե ե՞րբ է սկսում Լուսինը ծած-
կել Արեգակին՝ մասնակի խավարման
սկիզբը, Ե՞րբ է սկսում լրիվ խավարման
ֆազը, որքան ժամանակ է տևում լրիվ
խավարումը և ե՞րբ է Արեգակն ազատվում
Լուսնից, այսինքն խավարման վերջը:

Հնարավոր է նախօրոք կազմել Արե-

գակի հետագա խավարումների շերտի քարտեզը, թե տվյալ խավարումը լրիվ և մասնակի կերպով երկրի որ մասերից է երևալու։ Հաշվում են խավարման շերտի լայնությունը, երկարությունը և տարբեք մասերում խավարումը սկսելու և վերջանալու ժամանակը։

Խավարումների հաշվելու վերաբերյալ խոշոր աշխատանք է կատարել Օպպոլցելը։ Նա իր «Խավարումների կանոն» հայտնի աշխատության մեջ որոշել է 3368 տարվա (սկսած մ.թ.ա. 1207 թվից մինչև մ.թ. 2161 թ.) ընթացքում տեղի ունեցած և ունենալիք 13.000 խավարումների թիվը, որից 8000 Արեգակի և 5200 Լուսի խավարում։

Սարոսի ընթացքում տեղի է ունենում մոտավորապես 70 խավարում, որից 41 Արեգակի, իսկ 29 Լուսի խավարում։

Մեկ տարում Արեգակի և Լուսնի խավարումներ ամենաշատը կարող է լինել 7, իսկ ամենաքիչը 2՝ երկուսն էլ Արեգակի։ Օրինակ 1917 և 1935 թվականներին եղել է 7 խավարում, 1917 թվականին տեղի ունեցած 7 խավարումներից 4-ը եղել է Արեգակի, 3-ը Լուսնի, իսկ 1935 թ. 7 խավարումներից 5-ը եղել է Արեգակի, 2-ը Լուսնի։ Ավելի հաճախ լինում են մասնակի խավարումներ, քան լրիվ և օղակաձև։

Ստորև բերված աղյուսակում տրված է 1930 թվականից սկսած մինչև 1950 թվականը տեղի ունեցած և ունենալիք Արեգակի ու Լուսնի լրիվ խավարումների ժամանակը։

ԱՐԵԴԱԿԻ ԼՐԻՎ ԽԱՎԱՐՈՒՄՆԵՐԸ
(1930—1950 թ. թ.)

Տարեթիվ	Ամիս, ամսաթիվ	Խոկտնական գույքը (մլն.)	Խոկտնական գույքը (մլն.)	Խոկտնական գույքը (մլն.)	Խավարման շերտ անցման վայրերը	
					Ամիս	Ամսաթիվ
1930 Հոկտեմբեր	21	22	1,9	Խաղաղ օվկիանոս		
1932 Օգոստոս	31	20	1,5	Կանադա		
1934 Փետրվար	14	1	2,7	Բունեն		
1936 Հունիս	19	5	2,5	Հունաստան, ՍՍՌՄ, Ճապոնիա		
1937 Հունիս	8	21	7,1	Խաղաղ օվկիանոս, Գերու,		
1940 Հոկտեմբեր	1	13	5,7	Կոլումբիա, Բրազիլիա,		
1941 Սեպտեմբեր	21	5	3,3	Հարավային Աֆրիկա		
1943 Փետրվար	4	24	2,5	ՍՍՌՄ, Կենտրոնական		
1944 Հունվար	25	1	4,1	Ասիա, Չինաստան		
1945 Հուլիս	9	11	1,1	Չինաստան, Ալյասկա		
1947 Մայիս	20	14	5,2	Հարավային Ամերիկա		
1948 Նոյեմբեր	1	6	1,9	Արևմտյան Աֆրիկա		
1950 Սեպտեմբեր	12	—	0,9	Կոնգո		
				ՍՍՌՄ-ի հյուսիսարևելայտնագոյացն մաս		

ԼՈՒՍՆԻ ԼՐԻՎ ԽԱՎԱՐՈՒՄՆԵՐԸ
(1930-1950 թ. թ.)

Տարեթիվ	Ամիս և ամսաթիվ	Խավարման միջին մոմենտը Գրինիչի ժամանակով	Ժամ	Բույն
1931	Ապրիլ	2	20	21
1931	Մեպտեմբեր	26	19	45
1935	Հունվար	19	15	50
1935	Հուլիս	16	5	00
1936	Հունվար	8	18	13
1938	Մայիս	14	8	46
1938	Նոյեմբեր	7	22	26
1939	Մայիս	3	15	14
1939	Մարտ	28	6	39
1942	Մարտ	3	0	25
1942	Օգոստոս	26	3	50
1945	Դեկտեմբեր	19	2	22
1946	Հունիս	12	18	40
1946	Դեկտեմբեր	8	17	49
1949	Ապրիլ	13	4	12
1949	Հոկտեմբեր	7	2	54
1950	Ապրիլ	2	20	44
1950	Մեպտեմբեր	26	4	15

ԽԱՎԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՍՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հին ժամանակներում հետամնաց ու
սնահավատ մարդիկ չհասկանալով Արեգակի
և Լուսնի խավարումներն առաջանալու
պատճառները՝ խավարումներից սաստիկ
վախենում էին, կարծելով թե Արեգակը
կամ Լուսինը զբկվում են իրենց լույսից,
ուստի և աշխարհը պետք է կործանվի:

Խավարումների երևույթը համարում
էին հրաշք և կապում այս կամ այն աղետի,
պատերազմի, ջրհեղեղի, երկրաշարժի, հա-
մաճարակ հիվանդությունների, սովի և
այլ դժբախտությունների հետ։ Որոշ ժո-
ղովուրդներ կարծում էին, որ խավարում-
ներ առաջանալու պատճառն այն է, որ
իբր թե մի ահոելի վիշապ կուլ է տալիս
Լուսնին և Արեգակին, իսկ որոշ ժողո-
վուրդներ ենթադրում էին, թե ինչոր

սատանաներ խեղդում են կուսնին ու
Արեգակին:

Նախապաշարված մարդիկ կուսնի և
Արեգակի խավարումների ժամանակ սկսում
էին վայնասուն բարձրացնել, տնալին
կահկարասիներ ծեծել, հրացան կրակել,
եղել են դեպքեր, որ թնդանոթներ են
կրակել, որպեսզի փախցնեն վիշապին
կամ սատանաներին: Եղել են դեպքեր,
երբ մարդիկ այն աստիճան են վախեցել
խավարումներից և համոզված են եղել, թե
ախարհի վերջն է, որ ինքնասպանություն
են կատարել:

Բերենք պատմությունից մեզ հասած
մի երկու փաստ, թե հնում ինչպես էին
վերաբերվում խավարումներին:

Հին հույն գրող Հերոդոտը նկարագրել
է, որ լիդիացիները և մեդացիները հինգ
տարի իրար դեմ տնընդհատ պատերազմ

Որ մեսարան, ին ինչպէս էլքն գլուխութիւն խառնազն թիւն Պեղումնեցի



էին մղում, երբ պատերազմի վեցերորդ
տարին հանկարծակի ցերեկը վերածվեց
գիշերվա, այսինքն տեղի ունեցավ Արե-
գակի լրիվ խավարում։ Նրանք գաղարեց-
րին կռիվը և ստահոգվեցին ինչ զնով էլ
փոխի խաղաղություն կնքել։

Այդ խավարումը տեղի է ունեցել
585 թ. մայիսի 25-ին (մեր թվարկու-
թյունից առաջ), Հետաքրքրական է հիշա-
տակել նաև Քրիստոնիոր կոլումբոսի ճաշ-
նապարհորդության ժամանակ, նրա Յա-
մայկաբում եղած միջոցին (1504 թ.), ըը-
նիկներին հանդիպելու դեպքը։ Նա պարե-
նամթերք ստանալու համար դիմում է հըն-
դիկներին, սակայն նրանք բավարարելու
փոխարեն դիմագրություն են ցույց տվել
կոլումբոսին և նրա մարդկանց։ Այդ ծանր
դրությունից ազատվելու համար Քրիստո-
նիոր կոլումբոսը օդապործում է Լուսնի

խավարումը։ Նրան հայտնի էր, որ պետք
է Լուսինը խավարի։ Այդ պատճառով
վստահ կերպով հրամայում է հնդիկներին,
որ եթե իմ պահանջները չկատարեք, ձեզ
կզրկեմ Լուսնի լուսից։ Հնդիկները սկզբում
ոչ մի ուշադրություն չեն դարձնում, բայց
երբ սկսում է Լուսինը խավարել, վախից
սարսափահար եղած հավաքվում և խո-
նարհվում են Կոլումբոսի առաջ, խոստա-
նում կատարել նրա բոլոր պահանջները,
միայն թե Լուսինն ազատի խավարումից։

Կարելի է նման բազմաթիվ դեպքեր
հիշատակել։

Սակայն, չնայած որ այս խավարումների
առաջացման երկութը բացատրելիս տե-
սանք, որ գրանք ամենապարզ ու հասկա-
նալի երկնային երկույթներ են, և տեղի
են ունենում որոշակի օրինաչափությամբ
ու պարբերաշրջանում, և ոչ մի կապ չկա-

խավարումների ու աղետների միջև, բայց և
այնպես խավարումների հետ կապված սնա-
հավատությունների մնացորդները դեռևս
չոյտություն ունեն նաև մեր օրերում:

Քանի որ խավարումները սովորական
երևույթներ են, ամեն տարի մի քանի խա-
վարում է տեղի ունենում և նրանց առա-
ջանալու պատճառներն այնքան պարզ ու
հասկանալի են, որ շատ կարծ ժամանակում
կարելի է որոշել դրանց տեղի ունենալու
ճշգրիտ ժամանակը, ապա խավարում-
ների վերաբերյալ նախապաշտումները
բնականաբար ոչնչանում են:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ

1.	Էնդհանուլը գաղափարը խավարումների մասին	1
2.	Արեգակի խավարում	2
3.	Արեգակի լրիվ խավարում	2
4.	Արեգակի օղակաձև խավարում	2
5.	Արեգակի մասնակի խավարում	2
6.	Լուսնի խավարում	3
7.	Արեգակի խավարումը դիտելու նշանա- կությունը	4
8.	Սարսա	6
9.	Խովարումների հետ կապված սնահավա- տությունները	2

Գառ. խմբագիր՝ Բ. Մարգարյան

Վ. 62171. Գատվեր 474, Տիրաժ 6000. Տպագր. 5 մա-

շեղինակային 1, մամ. 20/XII—44 թ.

Ստորագրված է տպայքը թուան

Հայպետհրատի տպարան, Երևան, 1944

ԱՐԱՐԱՏԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0035965

ԳԻՒԸ 2 Ր.

